

այնակեցի, եւ համաւրէն աղանց իւրոց, որ ստացաւ զսուրբ պատուիրանն ի բարեխօսութիւն իւր եւ ծն(ո)ղաց իւրոց: Եւ զտառապե(ա)լս ի զործոց բարե( ա)ց զապիկար գրիչ Թորոս եւ զԾն(ո)ղոս իմ, եւ խոչորութեան սղանալաց անմեղազիւ լեւրուք. զի ըստ ժամանակիս բերմանն այսչափ եղեւ. եւ որ զմեզ յիշէ յիշեալ լիցի ի քրատոսէ աստուծոյ մերոյ»(3):

Ձեմ՝ գլխեր թէ ի՞նչ ըսել կուզէ Թորոս «ժամանակիս բերմանն այսչափ եղեւ» յիշատակութեամբ: Հաւանաբար Սուլթան Աճմէտի սպանման եւ Արղու Ղանի անոր տեղ անցնելուն տակնուվրայութեանց կ'ակնարկէ, որոնցմէ բնական է զուրկ չէր Մուշ եւ Տարօն: Ամէն պարագայի տակ Թորոս իր ձեռագրին «խոչորութիւն սղանալաց»ը չի վերագրեր իր այս ձեռագրին առաջին գրչութեան արդիւնք ըլլալուն, որով կրնանք խորհիլ որ անոր առաջին երախայրիքը չէր այս Նոր Կտակարանը: Հայ գրբիչները ընդհանրապէս առաջին գրչութիւնն իբր այդ կը յիշեն: Նոյն ատեն Թորոսի այս գրչութիւնը եղած է «նուրբ եւ ընտիր»(4) ըստ Հ. Բ. Սարգիսեանի, երկրորդ պատճառ մը խորհելու որ Թորոս ունեցած է 1284-ի իր այս գրչութենէն աւելի առաջ կատարուած գրչութիւններ:

Ին կը գտնուէր Մուշ ուր հաւանաբար ծնած էին իր ծնողքը եւ

Ինչպէս տեսանք ձեռագրին յիշատակարանէն Թորոս 1284-ուր ծնած ըլլալու է նաեւ ինքը դատելով Մշեցի եւ Տարօնեցի մանկանոսանոսմէն, որ կը սիրէ գործածել իր ծնողաց եւ ինքզինքին համար: Դժբախտաբար 1284-ի այս յիշատակարանը չի յիշեր թէ Մշոյ մէջ ո՞ր եկեղեցւոյն հովանիին տակ գրած է ձեռագիրը, ոչ ալ կը յիշէ ուսուցուչի կամ ուսուցիչներու մասին: Յետոյ պիտի ծանօթանանք որ հայրը քահանայ էր որով գուցէ ենթադրենք անոր նախնական կրթութիւնը իր հօրը քով իսկ ստացած ըլլալը: Այդ շրջանին Մշեցի դիտնական հայ եկեղեցականներ չէին պակսիր: Օրինակ Յովհաննէս Մշեցի՝ Ներսէս Սասնեցիի «հոգեւոր եղբայր»ը, Ներսէս Մշեցի՝ Գլաճորի վանահայրը որուն յաջորդեց մեծանուն Եսայի Նշեցին, եւ ուրիշներ:

3) Մայր ցուցակ Հայ Ձեռագրաց Մտգր. Մխիթ. Վենետիկ, էջ 810-11:

4) Անդ էջ 805: